

*ԽՍԹԱԳՐԱԿԱՆ  
EDITORIAL*



## ՃԱՐՏԱՐԱՊԵՏ...

Հարուստ առումներով բառ՝ որ մեզի կը ստիպէ խորանալ՝ ըմբռնելու համար տարբեր ընկալումները եւ բազմակողմանի իմաստները։ Նախ՝ պետ է, այսինքն ճարտարներուն գլխաւորը, առաջինը, լաւագոյնը։ Բայց ովքե՞ր են այս ճարտարները։ Ճարտար՝ իր հնագոյն իմաստով կառուցող կը նշանակէ, բայց նաև ճարպիկ, տարբեր արհեստներու գիտակ եւ արուեստագէտ։

Ճարտարապետ բառի իմաստները քննելու ընթացքին, Երից Վարդապետաց Նոր Հայկազեան բառարանը այսպէս կը գրէ. «նախ զԱստուծոյ ասի, որպէս Արարչագործ. Տե՛ս Իմ. Է. 21: լ. 6: ԺԳ. 1: Եփր. Ժա. 10: Եւ ապա զայլոց նարտարաց յաշխարհի. վարպետ» (Հայկազեան բառարան, 1836, էջ 176, սիւն 2):

Ճարտարապետը իր գիտութեամբ, մտապաշարով, փորձառութեամբ, հանճարեղութեամբ, տրամաբանական եւ միաժամանակ ստեղծագործական թռիչքով, ճարպիկ լուծումներով եւ աւանդական հաստատուն ընտրութիւններով մեզի կը ներկայանայ որպէս գերազանց տիպար, կարելի է ըսել սովորականէն դուրս, բացառիկ անձնաւորութիւն։

Ահա պատճառը՝ որու համար հին դարերուն Ճարտարապետը պատահական անձ չէր. եթէ հեթանոսական շրջանին ան քուրմերու դասէն էր, քրիստոնէական աշխարհի մէջ կը նոյնանայ հոգեւորականի հետ։ Ուսումնառութեան երկար տարիներ, արհեստի գաղտնիք, վարպետութեան փոխանցում, այս բոլորը կ'ենթադրեն իսկական հետեւողական աշխատանք, աշկերտի ընթացքէն մինչեւ իսկական ճարտարապետի կոչումը։

Վաղագոյն շրջաններէն յիշենք Ս. Գրիգոր Լուսաւորիչը, Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսը, Կոմիտաս Կաթողիկոսը, Սամեհան արեղան, Յովհաննէս Սարկաւագը, Մոմիկ Վարդապետը եւ ուրիշ շատեր, մինչեւ Մխիթար Մերաստացին։

Հետեւաբար, զարմանալի չգտնենք, որ Ճարտարապետութեան նուիրուած գիտաժողով մը, որպէս գործընկեր գտած է կրօնաւորական հաստատութիւն մը եւ տեղի կ'ունենայ հայ վանականութեան ժառանգորդ Ս. Ղաղարի մայրավանքի մէջ, որ անվարան կարելի է կոչել ձեռակերտ Մխիթար Մերաստացիի։

Ընդհանրական Աբբահօր՝ Հ. Եղիա Ծ. Վրդ. Քիլաղպետանի խօսքերով՝ «քող այս գիտաժողովը ըլլայ շղթայի մը առաջին օդակը միայն, եւ այն շարունակուի ամէն տարի, ի լուր աշխարհի փաստելով, որ մեծ ազգ ենք, մեծագոյն հանարկներով ամէն բնագաւառի, ինչպէս նաև նարտարապետութեան մէջ»։

Conferenza  
18 -20  
maggio  
2014

Esposizioni  
18  
maggio  
-  
01 giugno  
2014

# *Conservazione e restauro del patrimonio culturale dell'Armenia*



Ambasciata della  
Repubblica  
d'Armenia



Politecnico  
di Milano